

*ՀՀ ԿԳՄՄՆ «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ*

Ֆակուլտետ՝ Նախնական զինվորական պատրաստություն ամբիոն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Անհատական պաշտպանական միջոցներ, պաշտպանական կառույցներ թեմայով:

Զինդեկ՝ Գեղեցիկ Վարդանյան Սամվելի

Ղեկավար՝ Երվանդ Տոնոյան Պարույրի

ԳՅՈՒՄՐԻ 2023

Բովանդակություն

Ներածություն.....	3-4
Գլուխ I: Անհատական պաշտպանության միջոցներ.....	5-6
<i>1.1 Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ</i>	<i>6-8</i>
<i>1.2 Մաշկի պաշտպանության միջոցներ.....</i>	<i>8-11</i>
<i>1.3 Տեսողական օրգանների պաշտպանության միջոցներ.....</i>	<i>11-12</i>
<i>1.4 Անհատական պաշտպանության բժշկական միջոցներ.....</i>	<i>12-13</i>
<i>1.5. Անհատական պաշտպանական միջոցների կիրառման մեթոդական ուսումնական գործընթացում.....</i>	<i>13-16</i>
Գլուխ II: Պաշտպանական կառույցներ	
<i>2.1. Առանձին կառուցված ապաստարանների բնութագիրը.....</i>	<i>17-19</i>
<i>2.2. Ապաստարաններում վարքի կանոնները.....</i>	<i>19-20</i>
<i>2.3. Պարզագույն թաքստոցների պաշտպանական հատկությունները.....</i>	<i>20-21</i>
Եզրակացություն:	22
Օգտագործված գրականության ցանկ:	23

Ներածություն

Հետազոտական աշխատանքում ուսումնասիրվում է **անհատական պաշտպանական միջոցների նշանակությունը և դերը, դրանց օգտագործման կանոնները, պաշտպանական կառույցներ:**

Անհատական պաշտպանության միջոցները ծառայում են տեխնածին և այլ բնույթի արտակարգ իրավիճակներում, պաշտպանական կառույցները՝ թշնամու կողմից օդային ուժերի ծամանակ բնակչության պաշտպանության նպատակին:

Թեմայի արդիականությունը: Մեր հայրենիքը գտնվում է այնպիսի տարածքում, որտեղ ռազմական լարվածությունը շատ է բարձր: Ճիշտ է հարևան պետության հետ 1994 թվականից կնքվել է հրադադարի պայմանագիր, սակայն այն խախտվել է հաճախակի:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին կրկին խախտելով հաստատված զինադադարը Ադրբեյջանի հանրապետությունը հարձակում է գործում ԼՂՀ սահմանների վրա, 44-օրյա մարտերի արդյունքում նոյեմբերի 10-ին կնքվեց զինադադար, բայց սահմանային դիրքերում վիճակը մինչ այժմ լարված է մնում: Հնարավոր պատերազմի դեպքում պետք է պատրաստ լինել մարտին: Այդ իսկ պատճառով նման թեմայի քննարկումը ինչպիսին է անհատական պաշտպանության միջոցների նշանակությունը և դերը, դրանց օգտագործման կանոնները, պաշտպանական կառույցներից օգտվելը որպես այդպիսին շատ արդիական է, որը ուսումնասիրության և հետազոտության շատ տեղեր ունի:

Աշխատանքի նպատակն է ծանոթացնել ու խորացնել գիտելիքները այնպիսի կարևոր թեմայի շուրջ, ինչպիսին է անհատական պաշտպանական միջոցների կիրառումը քաղաքացիական պաշտպանության մեջ, պաշտպանական կառույցներից օգտվելը ռազմական, տեխնածին և այլ բնույթի արտակարգ իրավիճակներում և խաղաղ պայմաններում:

Աշխատանքի առարկան է աշխատանքի վերջին էջում նշված գրականության ցանկի տարբեր գրքեր:

Խնդիրները: Խնդիրները բազմաթիվ են, որոնցից են օրինակ բնակչության պաշտպանությունն արտակարգ և պատերազմական իրավիճակներում:

Մեթոդներն են եղած գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը:

Ուսուցման մեթոդիկան նպատակ ունի գործնականում ծանոթացնել և տիրապետել անհատական պաշտպանական միջոցներից և պաշտպանական կառույցներից օգտվելու կանոններին: Միևնույն ժամանակ պարապմունքների ընթացքում ամրապնդվում և կատարելագործվում է ունեցած տեսական գիտելիքները:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 23 էջ համակարգչային տեքստի տեսքով: Այն բաղկացած է ներածական մասից, երկու գլուխներից, ենթագլուխներից կատարված եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Կատարված հետազոտական աշխատանքում հնարավորինս ուսումնասիրվել ու վերլուծվել է անհատական պաշտպանության միջոցների տեսակները և դրանց կիրառումը ուսումնական գործընթացում, քաղաքացիների անհատական պաշտպանությունն արտականգ և պատերազմական իրավիճակներում:

Գլուխ I

Անհատական պաշտպանության միջոցներ

Անհատական պաշտպանության միջոցները ծառայում են տեխնաձին և այլ բնույթի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության նպատակին:

Անհատական պաշտպանության միջոցներ, հատուկ հագուստ, կոշիկ և պաշտպանական այլ հարմարանքներ ու սարքեր, որոնք կիրառվում են օրգանիզմի վրա վտանգավոր և վնասակար արտադրական գործոնների ներգործությունը կանխելու կամ նվազեցնելու համար: Պատերազմական պայմաններում անհատական պաշտպանության միջոցները մարդկանց պաշտպանում են ռադիոակտիվ, թունավոր նյութերի, կենսաբանական ու քիմիական զենքի ախտահարումներից:

Անհատական պաշտպանության միջոցները լինում են՝

- շնչառական օրգանների պաշտպանության՝ հակագազ, շնչադիմակ, փրկադիմակ, հակափոշային գործվածքե դիմակ, բամբակամառլայե վիրակապ,
- մաշկի պաշտպանության՝ համագորային պաշտպանական լրակազմ, թեթև պաշտպանական կոստյում, պաշտպանական գտող հագուստ, փրկարար ծածկոց,
- տեսողական օրգանների պաշտպանության՝ հակագազ, մուգ և ցանցավոր ակնոցներ,
- պաշտպանության բժշկական միջոցներ՝ անհատական դեղատուփ /ԱԴ-2/, անհատական հակաքիմիական փաթեթ/ԱՀՓ-8,10,11/:

Ըստ նշանակման՝ անհատական պաշտպանության միջոցները բաժանվում են հետևյալ խմբերի, մեկուսացնող միջոցներ՝ օդաճնշումային արտահագուստ, ջրամեկուսացնող արտահագուստ, սկաֆանդր: Հատուկ հագուստ՝ կոմբինեզոններ, բաճկոններ, տաբատներ, արտահագուստ, խալաթներ, անձրևանոցներ, կիսամուշտակներ, գոգնոցներ, բաճկոնակներ, թևնոցներ ևն: Հատուկ կոշիկ՝ ճտքակոշիկներ, երկարաճիտք կոշիկներ, կրկնակոշիկներ և այլն: Ձեռքերի պաշտպանության միջոցներ՝ թաթմաններ, ձեռնոցներ, գլխի՝ սաղավարտներ, տարբեր ձևի գլխարկներ, դեմքի՝ դիմակներ, վահանակներ: Լսողության օրգանի պաշտպանության միջոցներ՝ հակաձայնային սաղավարտներ, ականջակալներ և

այլն:Պաշտպան, հարմարանքներ՝ գոտիներ, դիէլեկտրիկ գորգեր, ձեռքի բռնիչներ, ծնկակապեր, արմնկակալներ, մաշկի պաշտպան, միջոցներ՝ լվացամիջոցներ, մածուկներ, քսուքներ և այլն:

Անհատական պաշտպանության միջոցներ ընտրելիս, հաշվի են առնվում տվյալ տեխնոլոգիական գործընթացի կամ աշխատանքի տեսակի անվտանգության պահանջները: Այդ միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ աշխատանքի անվտանգությունը չի կարող ապահովվել սարքավորման կոնստրուկցիայով, արտադրական գործընթացի կազմակերպմամբ, կոլեկտիվ պաշտպանության միջոցներով:



ԳՊ-7



ԳՊ-7Վ

Նկար 1

1.1 Շնչառական օրգանների պաշտպանության միջոցները բաժանվում են ըստ՝

- գործողության սկզբունքի՝ գտող, մեկուսացնող,
- ծառայության՝ համագորային, քաղաքացիական, արդյունաբերական,
- կառուցվածքի՝ տուփային և ոչ տուփային:

Զտող հակագազերում արտաքին վարագված օդը ներշնչման ժամանակ մտնում է գտող-ներծծող տուփիկ, այնտեղ մաքրվում վնասակար խառնուրդներից, անցնում հակագազի դիմային մաս և շնչառական օրգան:Արտաշնչած օդը դիմային մասի տակից շրջանցելով տուփիկը՝ դուրս է գալիս:

Գոլորշիների և գազերի կլանումը հակագազերում կատարվում է փայտածուխի միջոցով :Այդ ծակոտկեն նյութն ունի ակտիվ մակերևույթ, որը լավ կլանում է քլոր, գարին, զոման, իպրիտ:

Ծխի և աերոզոլների գտումը կատարվում է թելիկավոր նյութերից պատրաստված հակաձխային գոտիչով: Այդ ծակոտկեն միջավայրով անցնելիս աերոզոլների մասնիկների մի մասը մնում է ծակոտիներում:



Նկար 2

Ներկայումս առավել կատարելագործվածը ԳՊ-7,

ԳՊ-7Վ(նկար 1), ԳՊ-7ՎՄ(նկար 2) մակնիշի քաղաքացիական հակագազն է, որը պաշտպանում է մի ամբողջ շարք թունավոր և ուժեղ ներգործող թունավոր նյութերից, ճառագայթակտիվ փոշուց և կենսաբանական նյութերից: Այն ունի խոսասարք ինչպես նաև ջուր խմելու հնարավորություն է տալիս: Հակագազն ընտրվում է ըստ գլխի համապատասխան չափսերի:

Զտող տուփիկի միացման համար ԳՊ-7ՎՄ-ի դիմային մասն ունի 2 բնիկ՝ աջից և ձախից: (նկար 2):

Հակագազի դիմային մասը ծառայում է շնչառական օրգանները, աչքերը և դեմքը վարակված օդի հետ շփումից մեկուսացնելու, մաքրված օդը շնչուղիներ հասցնելու և արտաշնչած օդը հեռացնելու համար:

Արդյունաբերական հակագազերը /ԱՀ/ ծառայում են առաջին հերթին վտանգավոր արտադրությունների աշխատողների կյանքը և առողջությունը պաշտպանելու համար ուժեղ ներգործող թունավոր նյութերի /ՈՒՆԹՆ/ արտահոսքի դեպքում: ԱՀ-ը մյուսներից տարբերվում են նրանով, որ շնչառական օրգանները, աչքերը և դեմքը պաշտպանում են միայն որոշակի վնասակար նյութերից:

Մեկուսացնող հակագազերը /ԻՊ-4, ԻՊ-5, ԻՊ-46Մ/ օդում պարունակող բոլոր վնասակար խառնուրդներից շնչառական օրգանների, աչքերի, դեմքի մաշկի պաշտպանության հատուկ միջոց են: Դրանք օգտագործվում են այն դեպքում, երբ

գտող հակազագերը չեն ապահովում այդպիսի պաշտպանություն, ինչպես նաև օդում թթվածնի անբավարարության դեպքում:

Զտող շնչադիմակները մարդու շնչառական օրգանների պաշտպանության համար են, ունեն թեթև քաշ, պաշտպանում են վնասակար գազերից, գոլորշիներից, աերոզոլներից և փոշուց: Կան հակափոշային, հակազագային և գազափոշապաշտպանիչ շնչադիմակներ: Լինում են մեկանգամյա և բազմակի օգտագործման: Մակայն շնչադիմակները բավարար արդյունավետ չեն, եթե օդում առկա են օրգանական ծագման լուծիչներ և դյուրավառ նյութեր:



Համազորային պաշտպանական լրակազմ՝ որպես կոմբինեզոն

Նկար 3

1.2 Մաշկի պաշտպանության միջոցներ:

Մաշկի պաշտպանության մեկուսացնող միջոցներից են հատուկ պաշտպանական հագուստը և համազորային պաշտպանական լրակազմը, (**նկար 3**), որի մեջ մտնում են պաշտպանիչ թիկնոցը, (**նկար 4**) պաշտպանիչ գուլպաները և պաշտպանիչ ձեռնոցները(**նկար 5**): Օգտագործվում է քիմիական հարձակման, կենսաբանական միջոցների կիրառման, ճառագայթակտիվ նյութերի առկայության, վարակված գոտու գազազերծման, ապակտիվացման և վարակազերծման աշխատանքներ կատարելու դեպքում: Պաշտպանական լրակազմը առավել վտանգավոր տեղերում օգտագործվում է կոմբինեզոնի տեսքով : Հատուկ պաշտպանական հագուստ լինում է հետևյալ տեսակների՝ թեթև կոստյում, կոմբինեզոն, գոգնոց և կոստյում՝ կազմաված բաճկոնից ու անդրավարտիքից: Նման հագուստ տրվում է այն անձանց, որոնք երկար ժամանակահատվածում աշխատանք են կատարում վարակված տեղանքում, ինչպես նաև թունավոր նյութերի հետ շփվելու դեպքում:

Պաշտպանական հագուստի տեսականին լայն է, ամենատարբեր պայմաններում աշխատելու համար /բարձր ջերմաստիճաններ /մինչև 1000° C /, էլեկտրական դաշտ, բաց կրակ և այլն/:

Մաշկի պաշտպանության միջոցները լինում են մեկուսացնող: Վերջինը պարունակում է բամբակե կոմբինեզոն, ներքնազգեստ և ոտքի 2 զույգ բամբակե փաթաթան: Մաշկի մեկուսացնող պաշտպանության միջոցներից են համագորային պաշտպանական լրակազմը, արտահագուստները, պաշտպանագտիչ կոմբինեզոնը: Մաշկի օժանդակ պաշտպանության միջոցներից են սովորական թիկնոցները և ռետինատոգորված գործվածքից, քլորվինիլից կամ պոլիէթիլենից կարված անձրևանոցները: Վերարկուն լավ է պաշտպանում ճառագայթաակտիվ փոշուց և բակտերիային միջոցներից, ինչպես նաև կաթիլահեղուկային թունավոր նյութերից (5-10 ր): Ախտահարման վտանգի դեպքում հագուստի կոճակները կոճկում են, թևերի և տաբատի ծալքերը կապում ժապավենաթելով, վերարկուի օձիքը բարձրացնում և կապում վզնոցով: Առավել հուսալի պաշտպանության համար հագուստը մշակում են հատուկ տոգորանյութով: Պաշտպանական թաղանթային կոստյումը նախատեսված է թունավոր նյութերի կաթիլներից մաշկածածկույթի համազգեստի, հանդերձանքի և անձնակազմի անհատական զենքի պաշտպանության, ինչպես նաև մանրէներից /կենսաբանական միջոցներից/ և ռադիոակտիվ փոշուց համազգեստի և հանդերձանքի վարագվածությունը նվազեցնելու համար:



Համագորային պաշտպանական լրակազմ՝ որպես թիկնոց

Նկար 4

Այն բաղկացած է՝ պաշտպանական թաղանթները թիկնոցից, պաշտպանական թաղանթի գուլպաներից, ռետինե պաշտպանական ձեռնոցներից և նորոգման համար կաշուն ժապավենից:

Թիկնոցը լինում է երեք չափսի՝

1-ը- մ 166 սմ հասակ ունեղող զինծառայողի համար

2-րդ- մ 167 սմ մ 178 սմ հասակ ունեցող զինծառայողի համար


3-րդ 45-46 սմ հասակ ունեցող զինծառայողի համար: (նկար 4):

Ոտքերի պաշտպանության համար օգտագործում են արդյունաբերական և կենցաղային նշանակության ռետինե ճտքակոշիկներ, երկարաճիտք կոշիկներ, կրկնակոշիկներ (նկար 5):

Սովորական կոշիկները կաթիլահեղուկային թունավոր նյութերից պաշտպանելու համար դրանք կարելի է փաթաթել (մի քանի շերտ) ամուր թղթով, իսկ վերջում՝ բրեզենտով կամ պարկագործվածքով:

Ձեռքերի պաշտպանության համար օգտագործում են ռետինե կամ կաշվե ձեռնոցներ և բրեզենտե թաթմաններ (նկար 5):

Հագուստի տոգորման մատչելի միջոց են տարբեր սինթետիկ լվացամիջոցներից պատրաստած լուծույթները, որոնք կիրառվում են սպիտակեղենի լվացման համար, կամ օձառայուղային էմուլսիաները:



Նկար 5

Տոգորման համար պետք է վերցնել 0,5 լ լվացամիջոց և 2 լ տաքացրած ջուր (50 °C), խառնել մինչև համասեռ լուծույթ ստացվելը: Կարելի է տոգորել նաև օձառայուղային էմուլսիայով, որի պատրաստման համար 250-300 գ մանրացրած տնտեսական օձառը

լուծել 2 լ ջրի (60-70 °C) մեջ: Լրիվ լուծվելուց հետո ավելացնել 0,5 լ հանքային կամ բուսական յուղ և խառնելով տաքացնել (60- 70 °C)՝ մինչև ստացվի համասեռ օճառայուղային էմուլսիա: Լուծույթը պատրաստել այնպիսի տարողության ամանում, որտեղ հնարավոր լինի տեղավորել ամբողջ հագուստը և աշխատել, որպեսզի այն հավասարաչափ տոգորվի: Քամված հագուստը չորացնել բաց օդում: Արդուկել պետք չէ: Տոգորումը չի քայքայում հագուստը, այլ հեշտացնում է դրա զագագերծումն ու ապասկտիվացումը:

Անհատական պաշտպանիչ սարքավորումներ

Մաշկի համար անհատական պաշտպանության միջոցները նախատեսված են մարդկանց պաշտպանելու համար պատահաբար քիմիապես վտանգավոր, թունավոր մարտական քիմիական, ռադիոակտիվ նյութերի և բակտերիալ գործակալների ազդեցությունից: Դրանք բաժանվում են հատուկ և իմպրովիզացված: Իր հերթին, հատուկ բաժանվում են մեկուսացման (օդանցք) և գտիչ (շնչառական):

Մեկուսիչ տիպի ընդհանուր մասերը պատրաստված են այնպիսի նյութերից, որոնք թույլ չեն տալիս կաթիլը կամ մի գույգ քիմիապես վտանգավոր նյութեր փախչել և ապահովել անհրաժեշտ խստություն:

Զտիչ միջոցները պատրաստված են բամբակյա գործվածքից, որը յուրացված է հատուկ քիմիական նյութերով: Բարակ շերտով ներծծումը ծրարում է գործվածքների թելերը, և դրանց միջև տարածքը մնում է ազատ: Այս ամենի արդյունքում նյութի օդի թափանցելիությունը հիմնականում պահպանվում է, և գործվածքով անցնելիս թունավոր և թունավոր նյութերի գոլորշիները հետաձգվում են: Որոշ դեպքերում դրանք չեզոքացվում են, իսկ մյուսներում՝ կլանում (կլանում):

1.3 Տեսողական օրգանների պաշտպանության միջոցները

Աչքերի պաշտպանական միջոցներից են **ՕՊՏ** և **ՕՏ** ակնոցները համագորային կոմպլեկսների պաշտպանական կոստյումը բաղկացած է հատուկ տոգորանյութով մշակված բամբակե գործվածքից պատրաստած բաճկոնից, տաբատից, պաշտպանական սպիտակեղենից, գլխարկից, ենթասաղավարթից և ունի նույն չափսերը ինչ որ ամառային համազգեստը:

Պաշտպանական ցանցավոր կոստյումը նախատեսված է միջուկային պայթյունի լուսային ճառագայթումից, մարդկանց մաշկածածկույթն ու համազգեստը քայքայումից պաշտպանելու համար և բաղկացած է հրապաշտպան տոգորանյութով, ցանցավոր գործվածքից պատրաստված տաբատից ու բաճկոնից: Այն հագնում են սովորական կամ պաշտպանական համազգեստի վրային և պատրաստված է երեք չափսի.

1- մինչև 166 սմ հասակ ունեցող զինծառայողների համար

2-րդ - մինչև 178սմ հասակ ունեցող զինծառայողների համար

3-րդ - մինչև 179 սմ-ից բարձր հասակ ունեցող զինծառայողների համար

ՕՊՖ և ՕՖ պաշտպանական ակնոցները նախատեսված են այրվածքներից, վնասվածքներից աչքերը պաշտպանելու և միջուկային պայթյունի լուսային ճառագայթումից ժամանակավոր կուրացման տեսողությունը կրճատելու համար:

Պաշտպանական ակնոցների մեջ մտնում են՝ ակնոցը, տուֆը, չքրտնող թաղանթներով երկու տուփ և անձեռոցիկ:

Ակնոցները պատրաստվում են 2 չափսի և ընտրվում ըստ դեմքի այտոսկրորի լայնության 135 մմ 1-ին չափսը, 136 մմ և ավելի 2-րդ չափսը:

1.4.Անհատական պաշտպանության բժշկական միջոցներ:

Անհատական պաշտպանության բժշկական միջոցները նախատեսվում են ինքնօգնության, փոխօգնության, ճառագայթային քիմիական և կենսաբանական միջոցներով հիվանդությունների կանխարգելման կամ հետևանքների նվազեցման համար:Այդ դեղամիջոցները գետեղված են ԱԴ-2 դեղատուփում, որի հրահանգում կան նաև դրանց օգտագործման եղանակները (**Նկար 6**):



Առաջին բուժօգնության դեղարկղիկ:


Նկար 6

Անհատական դեղարկղիկը պարունակում է զինձառայողների նախապահպանության և զանգվածային խոցման զենքի ազդեցության հետևանքների բուժման, ճառագայթահարման սկզբնական ռեակցիան նվազեցնող դեղամիջոցները, ինչպես նաև ցավազրկող դեղամիջոցները: Դեղարկղի պարունակությունը դրված է բնիկների բաժանված պլաստմասսայե տուփի մեջ: Դեղարկղիկում կա սրսկիչ պարկուճ /կարմիր կափարիչով/, որը պարունակում է հակաթույն /անտիդոտ/:

Սրսկիչ պարկուճի օգտագործման համար անհրաժեշտ է այն հանել դեղարկղիկից, ձախ ձեռքով բռնել փողրակի եզրավոր օղակից, աջով՝ իրանից, իրանը պտտել մինչև վերջ, հանել կափարիչը և սրսկիչ պարկուճը փողրակից բռնելով՝ ասեղը մինչև փողրակը մտցնել մարմնի փափուկ մասի մեջ՝ դրա համար հարմար և մատչելի տեղում: Պարկուճի իրանը սեղմել մատներով, դուրս մղել պարունակությունը և սեղմած մատները չբացելով՝ հանել ասեղը: Շտապ դեպքերում կարելի է դեղը ներարկել հագուստի վրայից: Մոտոհրաձգային ջոկի հրաձիգ- սանիտարն ունի նաև սանիտարական պայուսակ՝ վիրակապական նյութերով և առաջին անհրաժեշտության դեղամիջոցներով:

1.5. Անհատական պաշտպանական միջոցների կիրառման մեթոդիկան ուսումնական

գործընթացում: Դասի սկզբում անհատական պաշտպանական միջոցների թեման ուսումնասիրելիս սովորողներին ներկայացնել թե ի՞նչ է իրենից ներկայացնում անհատական պաշտպանական միջոցները, օգտագործել «հասկացությունների քարտեզ» ինտերակտիվ մեթոդը, գրատախտակին գծելով բացատրել, որ անհատական պաշտպանական միջոցները լինում են՝ շնչառական օրգանների պաշտպանության, մաշկի պաշտպանության, տեսողական օրգանների պաշտպանության և ներկայացնել թե ի՞նչ է արգելվում դրանք կիրառելու դեպքում:



Դասի հիմնական մասում սովորողներին ներկայացնել, որ շնչառական օրգանների պաշտպանության միջոցներից են՝ հակագագը, շնչադիմակ, փրկադիմակ, հակափոշային գործվածքե դիմակը, բամբակամառյայե վիրակապը:

Աշակերտներին ցուցադրելով հակագագը ԳՊ-7ՎՄ մակնիշի քաղաքացիական հակագագը բացատրել, որ այն պաշտպանում է մի շարք թունավոր և ուժեղ ներգործող թունավոր նյութերից, ճառագայթաակտիվ փոշուց և կենսաբանական նյութերից: Այն ունի խոսասարք, ինչպես նաև ջուր խմելու հնարավորություն(նկար 2):

Հակագագն ընտրվում է ըստ գլխի համապատասխան չափսերի: Բացատրել, որ գտող հակագագերում արտաքին վարագված օդը ներշնչման ժամանակ մտնում է գտող-ներծծող տուփիկ, այնտեղ մաքրվում վնասակար խառնուրդներից, անցնում հակագագի դիմային մաս և շնչառական օրգան, իսկ արտաշնչված օդը դիմային մասի տակից շրջանցելով տուփիկը՝ դուրս է գալիս: Հակագագի դիմային մասը ծառայում է շնչառական օրգանները, աչքերը և դեմքը վարագված օդի հետ շփումից մեկուսացնելու, մաքրված օդը շնչուղիներ հասցնելու և արտաշնչված օդը հեռացնելու համար(նկար 1):

Ներկայացնել հակազգազի օգտագործման կանոնները՝ ցուցադրելով բացատրել, որ հակազգազը կրում են պայուսակի մեջ՝ ձախ կողմից՝ ուսագոտին գցած աջ ուսին, իսկ պայուսակի կափույրը՝ դրսի կողմից: Ներկայացնել, որ հակազգազը կարող է լինել երեք դրոյթամբ «Երթային», « Պատրաստ» և «Մարտական» /հակազգազ հազաց/: Հակազգազը մարտական դրոյթան բերվում է ինքնուրույն կամ «Ճառագայթային վտանգ», «Քիմիական վտանգ», «Գազեր» հրամաններով:

Ցուցադրելով բացատրել աշակերտներին, որ

Հակազգազը հագնելու համար պետք է՝

- շունչը պահել ու աչքերը փակել,
- գլխարկը վերցնել գլխից և դնել կողքի կամ սեղմել ծնկների արանքում,
- պայուսակից հանել հակազգազը,
- երկու ձեռքով բռնել հակազգազի դիմային մասի ներքևի մասից՝ բութ մատներն ուղղված դեպի դուրս,
- ներքևի մասը դնել ծնոթի տակ և հագցնել գլխին՝ վերևի մասը հասցնելով ծոծրակին,
- խորը արտաշնչել և բացել աչքերը,
- գլխարկը դնել գլխին:

Հակազգազը հանելու համար պետք է՝

- աջ ձեռքով վերցնել գլխարկը,
- ձախ ձեռքով բռնել դիմային մասի կափույրատուփից, մի փոքր քաշել ներքև և ձախ ձեռքի շարժումով առաջ ու վեր՝ հանել գլխից,
- գլխարկը դնել:

Որից հետո աշակերտներին ցուցադրվեց հակազգազը ճիշտ ձևով ծալելու և պայուսակի մեջ տեղադրելու ձևերը:

Էլեկտրոնային գրատախտակի միջոցով աշակերտներին ցուցադրել, որ մաշկի պաշտպանության միջոցները լինում են՝ համագորային պաշտպանական լրակազմը, թեթև պաշտպանական կոստյումը, պաշտպանական զտող հագուստը, փրկարար ծածկոցը (նկար 5):

Բացատրել, որ դրանք օգտագործվում են քիմիական հարձակման կենսաբանական միջոցների կիրառման, ճառագայթաակտիվ նյութերի առկայության, վարազված

գոտու գազազերծման, ապասկտիվացման և վարակազերծման աշխատանքներ կատարելու դեպքում:

Որից հետո ցուցադրել տեսողական օրգանների պաշտպանության/հակազագ, մուգ և ցանցավոր ակնոցներ/ և պաշտպանության բժշկական /անհատական դեղատուփ /ԱԴ-2/, անհատական հակաքիմիական փաթեթ /ԱՀԴ-8,10,11// միջոցները:

Դասի եզրափակիչ մասում հարցերի միջոցով ամփոփել նոր նյութի յուրացման աստիճանը սովորողների մոտ, ամրապնդել սովորողների գիտելիքները:

Գլուխ II Պաշտպանական կառույցներ

2.1. Առանձին կառուցված ապաստարանների բնութագիրը: Հակառակորդի հարձակման միջոցներից, ինչպես նաև տարբեր արտակարգ իրավիճակներում պաշտպանության հուսալի միջոցներից են պաշտպանական կառույցները:

Վերջիններիս թվից են՝

- Ստորգետնյա հատուկ շինությունները՝ ապաստարաններ, հակաճառագայթային թաքստոցներ, պարզագույն կառույցներ՝ նկուղներ, կիսանկուղներ և խորացված տարածքներ, հանքախորշեր, ստորգետնյա անցումներ, մետրոպոլիտեն:
- Բնակելի ֆոնդի տարածքները/առաջին հարկի տարածքներ՝ հարմարեցված որպես հակաճառագայթային թաքստոցներ, նկուղներ, կիսանկուղներ/:

Բնկաչության պատասխարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

- Պաշտպանական կառույցների վաղօրոք շինությունը,
- Պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստի վիճակում,
- Պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը
- Արագ կառուցվող ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի դեպքում:

Խաղաղ ժամանակ պաշտպանական կառույցները կարող են օգտագործվել այլ նպատակներով՝ տնտեսական, մշակութային, սպորտային և այլն: ՊԿ-ի այդ օգտագործումը /բացառությամբ մետրոպոլիտենի/ թույլատրելի է ՊԿ-ի ծավալի 40 տոկոսի չափով և ազատման ժամկետը պետք է լինի ոչ ավելի, քան մեկ ժամ:

Պաշտպանական կառույցները տարբերվում են *կառուցման ժամկետներով*՝

- Խաղաղ ժամանակ կառուցվող ապաստարաններ և հակաճառագայթային թաքստոցներ
- Արագ կառուցվող ապաստարաններ
- Արագ կառուցվող թաքստոցներ:

Պաշտպանական կառույցների տեղաբաշխումը կատարվում է համաձայն բնակավայրերի հեռավորության ու բնակչության խտության:



Ներկառուցված ապաստարան

Նկար 7

Ապաստարանները ըստ տեղադրման վայրի *լինում են՝*

- Ներկառուցված (գտնվում են շենքերի նկուղային հարկերում) (նկար 7):
- Առանձին(կառուցվում են շենքերից դուրս):

Ապաստարանները տեղադրվում են առավել խիտ բնակեցված տարածքներին մոտ, որպեսզի անհրաժեշտության դեպքում բնակիչները շուտ հասնեն ապաստարան:



Բնակչության պատսպարումը ապաստարանում

Նկար 8

Ապաստարանները ներառում են հիմնական / հատվածամաս նախամուտք-անցախուցեր/ և օժանդակ/ գոիչ-օդափոխիչ խուցեր, սանիտարական հանգույցներ, դիզելային էլեկտրակայաններ, պաշտպանված մուտքեր և ելքեր/ շինություններ: Ունեն լուսավորման համակարգ, կապի և ազդարարման սարքավորումներ: Կապի պահուստային միջոց է ռադիոկայանը: Բոլոր ապաստարանների ելքերից մեկը սարքավորված է որպես վթարային: Այն ստորերկրյա անցք է՝ մոտակա շենքերից հեռու, որը վերջանում է ամուր ելքով:

Ջրամատակարարումն իրականացվում է արտաքին ջրատար ցանցից:
Մակայն անհրաժեշտ է նաև խմելու ջրի վթարային պաշար համապատասխան տարողություններում: **(նկար 8):**

Արտաքին օդով շինությունն ապահովվում է երկու ռեժիմով՝

- Մաքուր օդփոխման, երբ օդը մաքրվում է ռադիոակտիվ փոշուց,
- Ջոխչ-օդափոխման, երբ օդը մաքրվում է թունանյութերից և կենսաբանական նյութերից:

Բնակչության պատսպարումն ապաստարաններում կատարվում է համապատասխան ազդարարումով, իսկ տեղավորումը՝ ապաստարանի պարետի ցուցումով: Ազդարարման շշակի արձակումից որոշ ժամանակ անց մուտքն ապաստարան դադարեցվում է, դռներն փակվում են:

2.2.Ապաստարաններում վարքի կանոնները:Ապաստարաններում գործում են սահմանված ռեժիմ և կարգ:

Ապաստարանից դուրս գալ կարելի է միայն պարետի կամ հերթապահի թույլտվությամբ՝ դրսում իրադրությունը պարզելուց հետո:

Ապաստարանի փլուզման կամ վնասման դեպքում, չսպասելով դրսից օգնության, պարետը կազմակերպում է պատսպարվածների տարահանումն ապաստարանից: Տարահանումը կատարվում է այսպիսի հերթականությամբ. նախ դուրս են գալիս մի քանի հոգի, որոնք սկզբում օգնում են ինքնուրույն չջարժվողներին, ապա՝ երեխաներին Այնուհետև տարահանվում են մնացածները:

Հակաճառագայթային թաքստոցները պաշտպանում են մարդկանց շնչառական օրգանները, մաշկը և հագուստը ռադիոակտիվ նյութերից, լուսային ճառագայթումից, թափանցող ճառագայթումից և հարվածային ալիքից:

Որպես հակաճառագայթային թաքստոց կարելի է հարմարեցնել շենքերի նկուղները, ներքնատները, մառանները, բանջարաբուստանային պահեստները, բնակելի և արտադրական շենքերի ցուլոլային և առաջին հարկերում շինությունները և լեռնային փորվածքները:

Թաքստոցում սարքավորվում են շինություններ՝

- Մարդկանց նստելու և քնելու համար
- Սանիտարական հանգույցի, օդափոխման կայանքի, աղտոտված վերնազգեստի պահպանման համար:

Թաքստոցը պետք է ունենա առնվազը երկու մուտք:

Ջրամատակարարումն իրականացվում է արտաքին և ներքին

ջրամատակարարման ցանցերից: Վերջինների բացակայության դեպքում տեղադրում են ջրի բաքեր:

Էլեկտրամատակարարումը կատարվում է արտաքին ցանցից: Նախատեսվում են նաև լուսավորման վթարային աղբյուրներ՝

կուտակիչներ, գեներատորներ, դիզելային վառելիքով փոքր էլեկտրակայաններ: Տեղադրվում են բարձրախոսներ, հնարավորության դեպքում՝ նաև հեռախոս և ռադիոմիջոցներ:

Մարդկանց մուտքը թաքստոց կատարվում է արագ, կազմակերպված:

Ռադիոակտիվ տեղումների կամ վտանգի դեպքում պետք է խստորեն հետևել անվտանգության *կանոններին այն է՝*

- Օդաքարշ տուփերի սողնակները չբացել,
- Թաքստոցներն օդափոխել յուրաքանչյուր 5-6 ժամը մեկ՝ օդաքաշ տուփերի սողնակները բացելով 15-20 րոպեով,
- Օդափոխման ժամանակ հագնել շնչառական օրգանների պաշտպանիչ միջոցները,
- Դռները կիպ փակել, բացառելով միջանցիկ քամիներ,
- Մնունդ և ջուր ընդունելու ժամանակ դռները չբացել,
- Վարակված տարածք դուրս գալիս հագնել ԱՊՄ,
- Մնունդը և ջուրը պահել հերմետիկ փաթեթներում:

2.3. Պարզագույն թաքստոցների պաշտպանական

հատկությունները: Պարզագույն տիպի հակաճառագայթային թաքստոցները

կարելի է հարմարեցնել տարբեր փակ շինություններ և բաց ձեղքեր: Այդ

նպատակով անհրաժեշտ է առաջին հերթին բարելավել դրանց պաշտպանիչ

հատկությունները, հերմետիկացնել դրանք, ապահովել պարզագույն օդափոխություն: Պետք է ամրացնել տան նկուղի ծածկը, դռների և լուսամուտների ոչ պիտանի բացվածքները լցափակել ավագով լի պարկերով, աղյուսով կամ ուղղակի հողով: Ծածկերի վրա փռել խարամի, ավազի 60-70 սմ-ոց շերտ, արտաքին պատերի շուրջը հող լցնել: Մուտքի սկզբնամասում հերմետիկ դռնով նախամուտք սարքավորել, ապահովել բնական օդափոխություն:

Նույն ձևով են հարմարեցվում շենքերի ներքնատները, մառանները, տների առաջին հարկերը:

Ոչ վատ պաշտպանություն կարող են ապահովել պարզագույն թաքստոցները՝ ճեղքերը: Բաց տեղանքի համեմատությամբ այդ 1,5-2 անգամ նվազեցնում են հարվածային ալիքի, լուսային ճառագայթման ազդեցությունը: Իսկ ճեղքը փակելու դեպքում այդ նվազագույնը դառնում է արդեն 2,5-3 անգամ:

Բաց ճեղքը գետնի մեջ փորված խրամատ է 1,8-2 մ խորությամբ և 1,1-1,2 մ լայնությամբ:

Ծածկված ճեղքեր ստանալու համար բաց ճեղքերը ծածկվում են գերաններով, երկաթբետոնյա սալերով, մետաղյա գլանվածքով:

Եզրակացություն

Այս աշխատանքը կատարելիս եկել եմ այն եզրակացության, որ անհատական պաշտպանության միջոցների կիրառումը, պաշտպանական կառույցների օգտագործումը ունի իր կարևոր դերը և նշանակությունը արտակարգ և պատերազմական իրավիճակներում:

Մարտի ժամանակ ստորաբաժանումների հրամանատարությունը պետք է հետևի, որ անձնակազմը ունենա համապատասխան հանդերձավորում՝ ռադիոակտիվ և թունավոր նյութերից, բակտերիային միջոցները օրգանիզմ թափանցելուց, ինչպես նաև մաշկի կամ հագուստի վրա ընկնելուց պաշտպանելու համար:

Մարտի ժամանակ բացի եղանակային պայմաններից, հանդերձանքը ևս ազդում է զորքի մարտունակության վրա: Մեկուսիչ միջոցների առանձնահատկությունն այն է, որ ամբողջական պատճառով օդը ներս չի ներթափանցում: Սա, իհարկե, լավ է, բայց միննույն ժամանակ մարմնի ամբողջ գոլորշին մնում է հագուստի տակ և մարմնի մակերեսին ջերմության ավելցուկ է ձևավորվում: Արդյունքում, մարդը գերտաքանում է և արագ հոգնում է:

Հաշվի առնելով, որ ՀՀ-ում արտակարգ և պատերազմական իրավիճակներում խոցելի կենդանի թիրախներից են համարվում նաև երեխաները, ուստի առաջարկում եմ ուսումնական հաստատություններում քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով, քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը՝ մանկավարժական կոլեկտիվի (դասղեկներ) հետ միասին, ուսումնական վարժանքների, ռազմասպորտային խաղերի, դասախոսությունների միջոցով աշակերտներին հնարավորինս գաղափար տալ անհատական պաշտպանական միջոցների կարևորության, ճիշտ և ժամանակին կիրառման, դրանցից օգտվելու կանոնների տիրապետում և պաշտպանական կառույցները՝ ըստ նպատակին օգտագործելու, իմանալ ազդանշանների և անվտանգության կանոնների մասին:

Կատարված աշխատանքի թեման ընտրելիս հաշվի եմ առել նրա կարևորությունը արտակարգ իրավիճակի և հավանական պատերազմի դեպքում:

Հնարավորինս ուսումնասիրել և վերլուծել եմ հանձնարարված աշխատանքը և աշխատել եմ լավագույնս ներկայացնել այն այս հետազոտական աշխատանքում:

Օգտագործված գրականության ցանկ, հղումներ

1. Մոտոհրաձգային զորքերի սերժանտի դասագիրք /գեներալ-մայոր Մ.Աբրահամյանի և գեներալ-մայոր Մ.Սարգսյանի հսկողությամբ/, Երևան, ՀՀՊՆ հրատարակչություն 1996թ:
2. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք/ընդհ.խմբ.՝ Ս.Մարգարյան, Երևան, Աստղիկ Գրատուն, 2017
3. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք/ընդհ.խմբ.՝ Ս.Մարգարյան, Երևան, Աստղիկ Գրատուն, 2017
4. Այլ գրականություն